ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 11/560 « 22 » 03 2016 թ.

Ձեր

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ Լ.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի թիվ 194-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման կարգը և Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը: Որոշման 2-րդ հավելվածով սահմանվել է միայն ՀՀ ոստիկանության պաշտոնատար անձանց ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը (թվով՝ 50), Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը չի հաստատվել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք:

ՀՀ ոստիկանության պետի 18.02.2005թ. թիվ 2-ՆԳ հրամանի 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված հավելվածի 53-րդ կետի համաձայն՝ ծառայողական ավտոմեքենաների մասին ամփոփիչ տվյալները (Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը) գաղտնագրված են, հետևաբար պաշտոնատար անձանց ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակից բացի, մնացած մասով տեղեկության տրամադրումը մերժվում է:

Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:

ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ *Ռ.ԽԱՆԶՐԱԴՅԱՆ*